Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 13-Ի ԹԻՎ 293, ՀՈՒՆԻՍԻ 16-Ի ԹԻՎ 297-Ա ԵՎ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի ԹԻՎ ԹԻՎ 303-Ա-305-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 293 որոշման և որոշման անբաժանելի մաս համարվող հավելվածներում որոշման հերթական համարից հետո անհրաժեշտ է նշում կատարել իրավական ակտի բնույթի մասին:

Որոշման 2-րդ կետում օրաթերթի անվանումը սխալ է գրառված:

Բացի այդ, համաձայն որոշման 3-րդ կետի որոշումն ունի մեկ հավելված *(գրառված է հաձայն հավելվածի)*, մինչդեռ կցված են թվով 2 հավելվածներ: Հետևաբար, վերոնշյալ կետում համաձայն բառից հետո գրառված հավելվածի բառն անհրաժեշտ է փոխարինել թիվ 1 և թիվ 2 հավելվածների թվերով և բառերով:

Որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածում աճուրդային եղանակով օտարվող հողամասի գործառնական նշանակությունը չի համապատասխանում օտարման նպատակին (հիմք՝ ՀՀ հողային օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մաս, 10-րդ հոդվածի 4-րդ մաս):

Թիվ 297-Ա որոշման նախաբանում հղումը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի դրույթին սխալ է կատարված, իսկ ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշման հղումը կիսատ է գրառված, բացի այդ անհրաժեշտ է հղում կատարել նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի դրույթներին:

Թիվ թիվ 303-Ա-305-Ա որոշումների նախաբաններում «հաստատված» բառի փոխարեն անհրաժեշտ է գրառել «սահմանված» բառը:

Կատ.՝ Շանթ Շաքարյանց
08.07.2022 թ.